**ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի շնորհավորական ուղերձը ՀՀ անկախության 21-րդ տարեդարձի առթիվ**

Սիրելի սյունեցիներ.

21 տարի առաջ այս օրը նոր էջ բացեց հայ ժողովրդի պատմության մեջ:

Անկախ պետականության կերտումը դժվարին, բայց միաժամանակ պատվարժան ճանապարհ էր, որը մեր ժողովուրդը հաջողությամբ հաղթահարեց: Հայ ժողովուրդը վերականգնեց սեփական ճակատագիրը տնօրինելու, ազատ, անկախ և ինքնիշխան պետություն ունենալու իր իրավունքը:

Սա տոն է, որի փափագն ու զգացողությունը իրենց հոգում կրել են հայ ժողովրդի բոլոր սերունդները: Տոն, որ մեր ազգի հարատևման ու արժանապատիվ կյանքի գլխավոր կռվանն է դարձել:

Բավական չէ սոսկ անկախություն նվաճելը, այն պետք է պահպանել ու ամրապնդել, որպեսզի անկախ ապրելու մեր իրավունքը մնա անսասան իրողություն, մանավանդ, որ այն ձեռք է բերվել հայոց հավաքական կամքի, ինչպես նաև մարտիրոսված հայորդիների արյան գնով:

Վստահ եմ, որ մեզանից յուրաքանչյուրը ոչինչ չի խնայի կայացած ու հզոր հայոց պետության համար:

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ համազգային տոնի՝ Հայաստանի Հանրապետության Անկախության օրվա առթիվ և մաղթում խաղաղություն, քաջառողջություն ու ամենայն բարիք:

**ՀՀ Սյունիքի մարզպետ** Ս. Խաչատրյան **Ս. Խաչատրյան**

21 սեպտեմբեր 2012թ.